ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2022 թվականի N 125-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի առաջին նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի հետևյալ օրակարգը.

1) Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական վճարների 2023 թվականի տեսակներն ու դրույքաչափերը, դրանց գծով արտոնությունները սահմանելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:

5) Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	կողմ (13)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ			
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ			
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ			
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			
ՔՅԱԼՈ ՀԱՍՐԱԹՅԱՆ			
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2022 թվականի N 126-Ա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կարեն Խաչատրյանի առաջարկը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի բնակիչ Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող Ազատության փողոցի 17-րդ նրբանցքի 12-րդ տան տանիքում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է տանիքը, այդ թվում՝ ձմռան պաշարը, ընտանիքը հայտնվել է սոցիալապես ծանր վիճակում, ընտանիքի երեք անդամներ հաշմանդամ են, երկու երեխաները՝ անչափահաս, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 17-րդ նրբանցքի թիվ 12 տան բնակիչ Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքին ցուցաբերել դրամական օգնություն՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով, ծախսերն իրականացնելով համայնքի բյուջեի «Սոցիալական օգնություն ընտանիքներին» ծրագրից

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

	կողմ (13)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ			
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ			
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ			
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ			
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2022 թվականի N 127-Ն

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Սահմանել Ջրվեժ համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

	կողմ (13)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ			
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ			
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ			
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ			
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 27
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 27-ի N 127-Ն որոշման

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1)հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

2)սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 (երեսուն հազար) դրամ,

բ.500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ,

գ.1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ,

դ.3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ,

3)ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3 000 (երեք հազար) դրամ,

բ.20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրք սահմանել 3 000 (երեք հազար) դրամ,

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն հավելվածի երկրորդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

4.Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում տեղական տուրք սահմանել՝

1) հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

2) սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

3) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 60 000 (վաթսուն հազար) դրամ.

6.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ.

7.Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 100 (հինգ հազար մեկ հարյուր) դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 700 (վեց հազար յոթ հարյուր) դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 500 (տասը հազար հինգ հարյուր) դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 500 (քսաներկու հազար հինգ հարյուր) դրամ,

զ.500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45 000 (քառասունհինգ հազար) դրամ,

2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 100 (հինգ հազար մեկ հարյուր) դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 700 (վեց հազար յոթ հարյուր) դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 500 (տասը հազար հինգ հարյուր) դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 500 (քսաներկու հազար հինգ հարյուր) դրամ,

զ.500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45 000 (քառասունհինգ հազար) դրամ.

8.Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175 (մեկ հարյուր յոթանասունհինգ) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ,

4) խաղատների համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ,

5) շահումով խաղերի համար՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ,

6) վիճակախաղերի համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ.

10.Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 (տասը հազար) դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

զ.500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 000 (մեկ հազար) դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 000 (երկու հազար) դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 000 (չորս հազար) դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ,

զ.500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12 500 (տասներկու հազար հինգ հարյուր) դրամ.

11.Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 (մեկ հազար) դրամ,

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 750 (մեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ,

3)սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) դրամ,

4)այլ արտաքին գովազդի համար՝ 750 (յոթ հարյուր հիսուն) դրամ,

5)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12.Համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ.

13.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

14.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ.

15.Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 (հինգ միլիոն) դրամ,

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 (յոթ միլիոն) դրամ,

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 (տասը միլիոն) դրամ:

16.Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

17.Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ օրացուցային տարվա համար՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

2) հեստապարային ակումբի համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:

18.Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 10 000 (տասը հազար) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

19.Սույն հավելվածի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերում նշված դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի կիրառմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2022 թվականի N 128-Ն

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԴՐԱՆՑ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ և 10-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Սահմանել Ջրվեժ համայնքում տեղական վճարների 2023 թվականի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Սահմանել Ջրվեժ համայնքում 2023 թվականի տեղական վճարների գծով արտոնությունները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

	կողմ (10)	դեմ (3)	ձեռնպահ (0)
ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ			
		ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ	
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ			
		ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ	
		ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ			
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 27

գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 27-ի N 128-Ն որոշման

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար տեղական վճար սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տասը հազար) դրամ,

2)300 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20 000 (քսան հազար) դրամ.

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար տեղական վճար սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տասը հազար) դրամ,

2) 300 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20 000 (քսան հազար) դրամ.

3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար տեղական վճար սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տասը հազար) դրամ,

2) 300 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20 000 (քսան հազար) դրամ.

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար տեղական վճար սահմանել՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ.

5.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար յուրաքանչյուր մասնակցի համար՝ տեղական վճար սահմանել՝ 10 000 (տասը հազար) դրամ.

6.Համայնքի կողմից բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար սահմանել՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 257,2 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ երկու) դրամ,

2)ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 (տաս) դրամ.

7. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճար սահմանել ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1)առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ.

2)հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների

ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) դրամ.

3)վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) դրամ.

4)գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 (երեք) դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 (ութ) դրամ.

5)արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) դրամ.

6)շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 7-րդ կետի 1)-ից 5) ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7-րդ կետի 1)-ից 5) ենթակետերով սահմանված դրույքաչափով.

7)շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7-րդ կետի 1)-ից 5) ենթակետերով սահմանված դրույքաչափով:

8. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար տեղական վճար սահմանել՝ 50 (հիսուն) դրամ:

9. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

10. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետի 1)-ից 5) ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճար սահմանել՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3 000 (երեք հազար) դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տասը հազար) դրամ.

3)ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող անձանց (համայնքային հիմնարկ կամ օպերատոր)՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11.Սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

12.Ջրվեժ համայնքում համայնքի կողմից ջրամատակարարման ծառայության կազմակերպման համար տեղական վճար սահմանել՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր ջրի համար՝ 75,1 (յոթանասունհինգ ամբողջ մեկ) դրամ կամ՝

2)ըստ տնտեսության՝ յուրաքանչյուր բաժանորդի համար ամսական՝ 5 303 (հինգ հազար երեք հարյուր երեք) դրամ.

13.Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար տեղական վճար սահմանել՝ մեկ երեխայի հաշվարկով ամսական 36 338 (երեսունվեց հազար երեք հարյուր երեսունութ) դրամ.

14.Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (երաժշտական դպրոց) ծառայություններից օգտվողների համար տեղական վճար սահմանել՝ մեկ երեխայի հաշվարկով՝ ամսական 27 958 (քսանյոթ հազար ինը հարյուր հիսունութ) դրամ.

15.Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճար սահմանել՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ.

16. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝ 1 500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ.

17.Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար տեղական վճար սահմանել՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

18.Ջրվեժ համայնքի Զովք բնակավայրի հանդիսությունների սրահում միջոցառումների կազմակերպման մեկ ժամվա համար տեղական վճար սահմանել՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

19.Համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների տրամադրման ծառայության վճար սահմանել՝ ամսական 300 (երեք հարյուր) դրամ յուրաքանչյուր հենասյան համար:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 27-ի N 128-Ն որոշման

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ջրվեժ համայնքում կենցաղային աղբահանության ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված աղբահանության վճարի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ աղբահանության վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե վճարողները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների անդամներ:

2.Սույն հավելվածի 1-ին կետում չներառված աղբահանության ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, յուրաքանչյուր բնակչի համար այն սահմանելով 200 (երկու հարյուր) դրամ:

3.Ջրվեժ համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

1) երեխայի ծնողը ազատամարտիկ է և (կամ) զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է,

2) զոհված զինծառայողի երեխա է,

3) երկկողմանի ծնողազուրկ երեխա է,

4) հաշմանդամ երեխա է:

4.Սույն հավելվածի 3-րդ կետում չներառված համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 6 000 (վեց հազար) դրամ:

5.Եթե Ջրվեժ համայնքի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (երաժշտական դպրոց) ծառայություններից օգտվողներն են սույն հավելվածի 3-րդ կետում նշված անձինք, ապա 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

6.Սույն հավելվածի 5-րդ կետում չներառված համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (երաժշտական դպրոց) ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

1) 4 000 (չորս հազար) դրամ, եթե երեխան հաշվառված է Ջրվեժ համայնքում,

2) 6 000 (վեց հազար) դրամ, եթե երեխան հաշվառված չէ Ջրվեժ համայնքում:

7.Ջրվեժ համայնքում համայնքի կողմից ջրամատակարարման ծառայություններից օգտվողների՝ ոռոգման սեզոնի ընթացքում խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու համար՝ 2023 թվականի մայիսի մեկից մինչև սեպտեմբերի երեսունն ընկած ժամանակահատվածի համար կիրառվում են նվազեցման արտոնություններ, ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր ջրի համար այն սահմանելով՝ 30 (երեսուն) դրամ:

8.Ջրվեժ համայնքում համայնքի կողմից ջրամատակարարման ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ մինչև 2023 թվականի հունիսի մեկը կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ ըստ տնային տնտեսության՝ յուրաքանչյուր բաժանորդի համար ամսական 3 500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ

9. Սույն հավելվածով նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

1) սույն հավելվածի 1-ին կետում նշված դեպքերում՝ Ջրվեժ համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվող ընտանիքի անդամի դիմումը, որին կցվում են վերջինիս անձը հաստատող

փաստաթղթի պատճենը, պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները,

2) սույն հավելվածի 3-րդ և 5-րդ կետերում նշված դեպքերում՝ Ջրվեժ համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի դիմումը, ծառայությունից օգտվողի անձը հաստատող փաստաթղթի կամ ծննդյան վկայականի պատճենը, պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2022 թվականի N 129-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել՝

1)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեն՝

ա.եկամուտների գծով 553,777.0 հազար դրամ,

բ.ծախսերի գծով 1,278,232.0 հազար դրամ,

գ.դեֆիցիտը (պակասուրդը)՝ 724,455.0 հազար դրամ:

2)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեի եկամուտները ըստ ձևավորման աղբյուրների, համաձայն N 1 հավելվածի:

3)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի:

4)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 1 հավելվածի:

5)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելվածի հատված 4-ի:

6)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N 5 հավելվածի:

7)Ջրվեժ համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 %-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

	կողմ (13)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ			
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ			
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ			
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ			
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 27
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 27-ի N 129-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ,** **(տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝**		553,777.0	553,777.0	0.0
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում՝**	**7100**	298,927.7	298,927.7	X
1110	**1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, (տող 1111+ տող 1112), այդ թվում՝**	**7131**	179,255.4	179,255.4	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		15,350.0	15,350.0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		10,200.0	10,200.0	X
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		153,705.4	153,705.4	X
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝**	**7136**	105,376.8	105,376.8	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		105,376.8	105,376.8	X
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝**	**7145**	14,295.5	14,295.5	X
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+տող 1146+տող 1147), այդ թվում՝	71452	14,295.5	14,295.5	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար,		3,500.0	3,500.0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		3,500.0	3,500.0	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0	0.0	X
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու		40.0	40.0	X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		70.0	70.0	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության		6,858.4	6,858.4	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		200.0	200.0	X
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո		80.0	80.0	X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		157.1	157.1	X
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կոնսուլտացիաներ տրամադրելու համար		0.0	0.0	X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.0	0.0	X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		0.0	0.0	X
1146	ժգ)Ավտոկայանատեղի համար		0.0	0.0	
1147	ժդ)Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		120.0	120.0	
1148	ժե)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման իրացման թույլտվության համար		2,770.0	2,770.0	X
1149	ժզ)Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		0.0	0.0	
1150	ժէ)Այլ տեղական տուրքեր		500.0	500.0	
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝**	**7300**	107,282.8	107,282.8	0.0
1230	**2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝**	**7321**	0.0	0.0	X
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ նպատակներով		0.0	0.0	X
1240	**2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝**	**7322**	0.0	X	0.0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ նպատակներով		0.0	X	0.0
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝**	**7331**	107,282.8	107,282.8	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		107,282.8	107,282.8	X
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ, (տող 1255 + տող 1256), այդ թվում՝		0.0	0.0	X
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		0.0	0.0	X
1256	բբ) այլ դոտացիաներ		0.0		X
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	0.0	X
1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0		X
1260	**2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1261 + տող 1262), այդ թվում՝**	**7332**	0.0	X	0.0
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	X	
1262	բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0	X	0.0
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390), այդ թվում՝**	**7400**	147,566.5	147,566.5	0.0
1310	**3.1 Տոկոսներ, այդ թվում՝**	**7411**	0.0	X	0.0
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսագումարներ		0.0	X	0.0
1320	**3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝**	**7412**	0.0	0.0	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		0.0		X
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝**	**7415**	9,171.5	9,171.5	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		7,622.0	7,622.0	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		0.0	0.0	X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		1,549.5	1,549.5	X
1350	**3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝**	**7422**	133,545.0	133,545.0	X
1351	Տեղական վճարներ, որից՝		80,045.0	80,045.0	X
	Ջրվեժի մակական երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի ծառայությունների վճար		5,508.0	5,508.0	0.0
	Ձորաղբյուրի մանկապարտեզ ՀՈԱԿ- ի ծառայությունների վճար		14,952.0	14,952.0	0.0
	Աղբահանության վճար		40,580.0	40,580.0	0.0

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
	Ջրի օգտագործման վճար		17,400.0	17,400.0	0.0
	Շինարարության ավարտի փաստագրման վճար		980.0	980.0	0.0
	Աճուրդի մասնակցության վճար		200.0	200.0	0.0
	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) [illegible]		425.0	425.0	0.0
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		53,500.0	53,500.0	X
1360	**3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից, (տող 1361 + տող 1362), այդ թվում՝**	**7431**	3,200.0	3,200.0	X
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		3,200.0	3,200.0	X
1390	**3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝**	**7451**	1,650.0	1,650.0	0.0
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		0.0	X	
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		0.0	X	0.0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		1,650.0	1,650.0	0.0

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ՀՈՂԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	ապառքը տարեսկզբի դրությամբ	ապառքը տարեվերջի դրությամբ	տվյալ տարվա հաշվարկային գումարը
		1	2	3
վ	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	79,651.2	70,301.2	0.0
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար	29,099.7	24,899.7	0.0
	Անշարժ գույքի հարկ	24,594.5	20,881.3	125,992.3
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	33,780.3	31,819.5	83,116.0
4	Հողերի վարձակալության վարձավճար	4598.9	2500.0	X
5	Այլ գույքի վարձակալության վարձավճար	1811.5	650.0	X

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 27-ի N 129-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7 +u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100)**	1,278,232.0	560,588.0	717,644.0
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180), այդ թվում՝**	179,768.4	143,768.4	36,000.0
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝***	169,488.4	133,488.4	36,000.0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	169,488.4	133,488.4	36,000.0
2130	**01**	**3**	**0**	***Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝***	4,700.0	4,700.0	0.0
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	0.0	0.0	0.0
2132	01	3	2	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	0.0	0.0	0.0
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4,700.0	4,700.0	0.0
2160	**01**	**6**	**0**	***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝***	5,580.0	5,580.0	0.0
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	5,580.0	5,580.0	0.0
2170	**01**	**7**	**0**	***Պետական պարտքի գծով գործառնություններ,***	0.0	0.0	0.0
2171	01	7	1	Պետական պարտքի գծով գործառնություններ	0.0	0.0	0.0
2200	**02**	**0**	**0**	**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2210+2220+տող2230+տող2240+տող225**	1,600.0	1,600.0	0.0
2210	**02**	1	0	***Ռազմական պաշտպանություն***	0.0	0.0	0.0
2211	02	1	1	Ռազմական պաշտպանություն, որից՝	0.0	0.0	0.0
2220	**02**	**2**	**0**	***Քաղաքացիական պաշտպանություն***	1,100.0	1,100.0	0.0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	1,100.0	1,100.0	0.0
2250	**02**	**5**	**0**	***Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝***	500.0	500.0	0.0
2251	**02**	**5**	**1**	***Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)***	500.0	500.0	0.0
2300	**03**	**0**	**0**	**Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն, որից՝(տող2310+տող2320+տող2330+տող2340+տող2350+տող2360+տող2370), այդ թվում՝**	1,410.0	1,410.0	0.0

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7 +u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2310	**03**	**1**	**0**	***Ոստիկանություն***	0.0	0.0	0.0
2311	03	1	1	Ազգային անվտանգություն	0.0	0.0	0.0
2312	03	1	2	Պետական պահպանություն	0.0	0.0	0.0
2313	03	1	3	Պետական պահպանություն	0.0	0.0	0.0
2320	**03**	**2**	**0**	***Փրկարար ծառայություն, որից՝***	1,150.0	1,150.0	0.0
2321	03	2	1	Փրկարար ծառայություն	1,150.0	1,150.0	0.0
2330	**03**	**3**	**0**	***Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն, որից՝***	260.0	260.0	0.0
2331	03	3	1	Դատարաններ	60.0	60.0	
2332	03	3	2	Իրավական պաշտպանություն	200.0	200.0	
2340	**03**	**4**	**0**	***Դատախազություն, որից՝***	0.0	0.0	0.0
2341	03	4	1	Դատախազություն	0.0		
2350	**03**	**5**	**0**	***Կալանավայրեր, որից՝***	0.0	0.0	0.0
2351	03	5	1	Կալանավայրեր	0.0		
2360	**03**	**6**	**0**	***Հետազոտական ու նախագծային աշխատանքներ հասարակական կարգի և անվտանգության ոլորտում, որից՝***	0.0	0.0	0.0
2361	03	6	1	Հետազոտական ու նախագծային աշխատանքներ հասարակական կարգի և անվտանգության ոլորտում	0.0		
2370	**03**	**7**	**0**	***Հասարակական կարգ և անվտանգություն (այլ դասերին չպատկանող), որից՝***	0.0	0.0	0.0
2371	03	7	1	Հասարակական կարգ և անվտանգություն (այլ դասերին չպատկանող)	0.0		
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490), այդ թվում՝**	164,444.0	36,900.0	127,544.0
2410	**04**	**1**	**0**	***Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ, որից՝***	0.0	0.0	0.0
2411	04	1	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	0.0		
2412	04	1	2	Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ	0.0		
2420	**04**	**2**	**0**	***Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն,***	2,900.0	2,900.0	0.0
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	2,900.0	2,900.0	
2422	04	2	2	Անտառային տնտեսություն	0.0		
2423	04	2	3	Ձկնորսություն և որսորդություն	0.0		
2424	04	2	4	Ոռոգում	0.0	0.0	0.0
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ, որից՝***	185,394.0	34,000.0	151,394.0
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	185,394.0	34,000.0	151,394.0
2480	**04**	**8**	**0**	***Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝***	1,150.0	0.0	1,150.0
2485	04	8	5	Տրանսպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	1,150.0	0.0	1,150.0
2486	04	8	6	Կապի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0		
2487	04	8	7	Այլ բնագավառների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0	0.0	0.0
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝***	-25,000.0	0.0	-25,000.0
